Պարույր Սևակ

Անահիտ

Դու օտա՞ր չես, չէ՞:
Բայց ի՞մն էլ չես, հա՞...
Դու՝ վաղընջական հինավուրց բագին
Փակ շրթունքներով ու բաց աչքերով:
Ես՝ մի հեթանոս առայսօր ծպտյալ:
Դու՝ հավերժաբուխ աղբյուր տասնակունք,
Քո ամեն մատից՝ մի ակրն ցայտիչ:
Իմ թաց աչքերի երկու ափերով՝
Եղեգնիկներով իմ թարթիչների,
Քո կամքից անկախ ըմպում եմ ես քեզ:
Անշարժությունը քո պիրկ ոտների
Դարձընում է ինձ մի խոյ օրուկված,
Որ պտտվում է չորսբոլորքը քո
Ողջ շառավիղով իր ոտնակապի:
Նա արածում է այն, ինչ աճում է
Իր ոտների տակ և քո շուրջբոլոր,
Բայց որոճում է... միայն քե՛զ ու քե՛զ
Ու բառաչում է... միայն քե՛զ համար:
Քո ստինքները՝ պարսատիկի պես,
Սպառնում են միշտ ջարդել գանգն իմ պիղծ,
Երբ ասում եմ քեզ, որ դրանք հետո

Կաղապար դարձան... սկիհի՞ համար:
Թվում է, թե քո շրթունքները փակ
Ուր որ է պիտի բարկությամբ բացվեն,
Երբ ասում եմ քեզ, որ հետագայում
Քեզ գրկել տվին մի... թո՞ւխ մանուկի:
Բայց ամեն անգամ խաղաղվում ես դու,
Երբ թաց աչքերիս երկու ափերով՝
Եղեգնիկներով իմ թարթիչների,
Քո կամքից անկախ ես ըմպում եմ քեզ:
Եվ հասկանում եմ, որ ամեն անգամ,
Երբ սկսվում է նո՛ր դարագլուխ,
Ջանում են մի կերպ խուսափել քեզնից,
Իսկ դարագլխի ավարտի վրա՝
Ինքնակամորեն քե՛զ վերադառնում:
Անտեսանելի վերջի՛դ ժամանակ,
Անտեսանելի սկզբի՛ս պահին
Հանդիպում ենք մենք... ու տրվում իրար:
Եվ չե՞ն տեսնում մեզ... չի տեսնում նույնիսկ
Ո՛չ պատվանդանը դ,
Ո՛չ կոշկատակը ս...
Դու դիցուհի՞ ես;
Բայց և ի՞մն ես դու...

09.VII.1961թ. 24.II.1964թ.
Մոսկվա Երևան